

պատմութեան հզօր հայեցուածովը , կիշխէ ու կը տիրէ բոլոր դարերուն վրայ , կը քննէ ու կը դատէ ներկայ դարը՝ որ իր անցաւոր կենացը չափն է , ու առանց վախի կ'ընկղմի անսահման ապագային դարուց մէջը :

Ի՞անի որ աս աշխարհքս գտնուի ան հոգիներէն մէկը որոնց Այստուած այն պիսի մեծութիւն մը տուաւ որ ժամանակին յետին սահմանը հասնելէն ետքն ալ դեռ չեն յուսահատիր ոչ իրենց վըրայ , ոչ ժամանակին վրայ , ոչ աշխարհիս վրայ՝ որ իրենց ետևէն կը լմբննայ ու կը կործանի , միշտ արժանաւոր , միշտ գեղեցիկ ու միշտ աստուածային բան պիտի ըլլայ իրեն սորվեցընելը թէ ինչ պիսի հաւատքով , ինչպիսի յուսով պիտի դէպ ՚ի յաւիտենակութիւնը դիմէ :

Եւ որովհետև եպիսկոպոսի մը թոյլ տրուած է բարձրաբարբառ քարոզելու թէ ինչուան ուր կը համար քրիստոնէական դաստիարակութեան բարձրութիւնը , կը համարձակիմ ըսելու որ դաստիարակութեան միայն չնորհեալ է յայտնելու տղոց , զորոնք որ կը կրթէ , դեռ այն պղտի հասակին մէջ թէ երկինքէն վար ինկած ըլլալով՝ ինչպէս քրիստոնէայք կրնան դարձեալ անոր ուղիղ Ճամբան գտնել , ու իրենց աշխատանքովը նոյն փառքը շահիլ : Այս ուրեմն քրիստոնէական դաստիարակութեան կ'իյնայ քիչ քիչ իր աշակերտացը սորվեցընելը թէ բոլոր աշխարհքս ոչինչ մըն է , պիտի գիտնան արհամարհել զաշխարհք . և որչափ աւելի կենաց մէջ առաջ երթան , այնչափ աւելի թըշուառ պիտի ըլլան ու նեղութիւն պիտի քաշեն աս ստորին աշխարհքիս մէջ որ զիրենք գերած է , և թէ որ կը փափագին երջանկութեան ծարաւը մարել , որ իրենց բնութեանը հիմն է ու հոգւոյն անսահման ցանկութիւնը , միայն աւետարանական չնորհաց սեղանոյն առջեւ կրնան այնպիսի թևեր գտնել՝ որոնցմով կարենան թռչիլ հեւանալ այն բաներէն որ իրենց համար անարգ ու անպիտան թագաւորութիւն մըն է , ու համարի մինչև երկնից անտեսանելի գա-

ւառները , ուր աներկուանալի իրաւունքով կրնան պահանջել որ ժառանգեն զԱյստուած ինքնին , ու յաւիտենականութեան պայծառութեան ու զուարժութեանցը մէջ իրեն հետ միանան :

Եւ թէ որ աս դարուս մարդիկներէն դեռ կը գտուին այնպիսիներ ալ որ աս մտածութիւնն ալ չափազանց բարձր սեպէն , ներէն ինձի իրենց ըսելու թէ երկայն ատեն ժլ դարուն որդիքն եղած են , այս է պատճառը . այն դարուն որ իր ամբարիշտ թեթևութեամբը որ չափ աստուածային մեծվայելութիւնը թշնամանեց՝ այնչափ աւելի մարդկային բնութեան արժանաւորութիւնը անգիտացաւ . այն դարուն կ'ըսեմ որուն դաստիարակութեան կանոնները հիմն ՚ի վեր տապալեցին բոլոր ընկերական ու կրօնական կարգը , ու ամէն իշխանութիւն և մեծարանք :

Իայց այն սերունդը որ հիմա երթալով կրթութիւն կ'առնու բացէ ՚ի բաց մերժեց այն անարգ վարդապետութիւնները և այն թանձր փիլիսոփայութեան ուսմունքները : Եւ ես ամենայն կերպով կը յուսամ որ մեր մէջը ոչ երբէք պիտի պակսին այնպիսի վեհանձն մոքեր , ու վսեմ հոգիներ , որոնց համար աս գեղեցիկ տեսութիւնը ոչ երբէք պարապ բան մը սիտի սեպուի , և ոչ այս բարձր մտածութիւնը մնկարելի արդեամբք ՚ի գործ զնելու , որոնք որ մէկ խօսքով , ըմբռնեն պիտի թէ ինչ ըսելէ ՏՂԱՑՅ , և թէ ինչ սեծարանք պէտք է որ ունենանք իրեն բառութեան յարգին վրայ :

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Աջակա մը հարստութեան աղբեկաները որոնք են . և մեր ազգը ասոնցմէ զորոնք կրնայ ունենալ կամ է ունի :